Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հոկտեմբերի 27-ի N 1099 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱԾ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԴԻՄՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների կամ սահմանափակումների (բացառությամբ իրավասու մարմինների կողմից քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության կամ վարչարարության կարգով կիրառված սահմանափակումների) պետական գրանցման կամ գույքի նկատմամբ իրավունքների կամ սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրման նպատակով ներկայացվող դիմումները (այսուհետ՝ դիմում) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած օպերատորների կողմից (այսուհետ՝ օպերատոր) Հայաստանի Հայաստանի կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացնելու, ինչպես նաև այդ դիմումների հիման վրա հարուցված պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման վարույթների իրականացման ավարտական փաստաթղթերը դիմողներին տրամադրելու ընթացակարգը:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված գործառույթներն իրականացնելու նպատակով օպերատորն օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան ստացած դիմումը և դրան կից փաստաթղթերն էլեկտրոնային համակարգի միջո-

ցով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

3. Ստացված փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակներին հաստատվում է օպերատորի համապատասխան աշխատողի էլեկտրոնային ստորագրությամբ:

4. Օպերատորը դիմումը և դիմումի հետ միասին ընդունված փաստաթղթերի էլեկտրոնային պատճեններն առցանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ներկայացնում անշարժ գույքի պետական գրանցման ավտոմատացված համակարգ մուտք գործելու համար իրեն տրամադրված մուտքի անվան և գաղտնաբառի օգտագործմամբ:

5. Դիմումի հետ միասին ընդունված փաստաթղթերը ներկայացվում են դրանց բնօրինակների տեսաներածված պատճեններն անշարժ գույքի պետական գրանցման ավտոմատացված համակարգում մուտքագրվելու (վերբեռնվելու) միջոցով, ընդ որում՝

1) դիմումի հետ միասին մուտքագրվող բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն օպերատորի համապատասխան աշխատողի էլեկտրոնային ստորագրությամբ.

2) փաստաթղթերի տեսաներածված պատճենները պետք է ներկայացվեն PDF ձևաչափի ֆայլերով.

3) փաստաթղթերի բնօրինակները պետք է տեսաներածված լինեն գունավոր՝ առնվազն 300 ՀՏՎ (DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի բնօրինակ փաստաթուղթն ամբողջությամբ.

4) պետական տուրքի կամ ծառայության համար վճարման փաստը հաստատվում է փաստաթղթերի կազմում ներկայացվող վճարման անդորրագրի էլեկտրոնային պատճենով:

6. Դիմումը և դիմումի հետ միասին ընդունված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները մուտքագրվելուց հետո ավտոմատացված համակարգի միջոցով դիմողին

տրամադրվում է դիմումի ընդունման ստացական, որտեղ պարտադիր պետք է նշվեն դիմողի տվյալները, ավտոմատացված համակարգում դիմումի մուտքագրման համարը, դիմումի էլեկտրոնային նույնականացման համարը, դիմումով պատվիրված գործառույթի տեսակը, անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն) և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը:

7. Սույն կարգով նախատեսված էլեկտրոնային եղանակով տրված դիմումները համարվում են անշարժ գույքի պետական գրանցման ներկայացված՝ մուտքագրվելու պահից, իսկ ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերի՝ ոչ աշխատանքային ժամերին մուտքագրվելու դեպքում դիմումը ներկայացված է համարվում դիմումի մուտքագրմանը հաջորդող աշխատանքային օրվանից:

8. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի տեսաներածված պատճենները սույն կարգի 5-րդ կետով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն մեկօրյա ժամկետում դրա մասին ծանուցում է համապատասխան օպերատորին: Անհամապատասխանության վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո օպերատորը մեկօրյա ժամկետում վերացնում է անհամապատասխանությունը և փաստաթղթերի տեսաներածված պատճենները ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

9. Օպերատորի կողմից ավտոմատացված համակարգում մուտքագրված դիմումների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար անձանց կողմից կազմված վարույթի ավարտական փաստաթղթերը սահմանված ժամկետներում հանձնվում են դիմումը մուտքագրած օպերատորին: Նշված փաստաթղթերը՝ հաստատված համապատասխան օպերատորի կնիքով, տրամադրվում են դիմողներին:

10. Օպերատորներին հանձնված դիմումները և դրանց կից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները յուրաքանչյուր ամսվա վերջում հանձնվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ